ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆՈ» (ՆԱԽԱՐՈՍՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 9 - 10 (16914) ՇԱԲԱԹ 6 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

COVID - 19

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎԱՐԱԿՄԱՆ 4 ՏՈԿՈՍԻՑ ՑԱԾՐ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԹՈՒՅԼ Է ՏԱԼԻՍ ՄԵՂՄԱՑՆԵԼ ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ»

ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ, ԻՍԿ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՑ ԿՍԿՍԵՆ ԱՇԽԱՏԵԼ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ փետրվարի 4-ին անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը: Մեկնարկին Գիորգի Գախարիան, հանրագումարելով երկրում կորոնավիրուսի տարածման դինամիկան, հայտարարեց, որ վարակման 4 տոկոսից ցածր ցուցանիշը թույլ է տալիս զգուշորեն շարունակել սահմանափակումների մեղմացումը:

- Կառավարության նախորդ նիստում մենք ասել էինք, որ սահմանափակումների թուլացման հարցը քննարկման առարկա կդառնա, եթե պահպանվի դրական դինամիկան: Ինչպես գիտեք, այսօր վարակման օրական մակարդակն իջել է 4 տոկոսից ցածր, ինչը թույլ է տալիս մեզ համարձակ, բայց զգուշորեն շարունակել մեղմացնել սահմանափակումները: Որքան ավելի համարձակ ենք մեղմացնում սահմանափակումները, այնքան մեզանից յուրաքանչյուրն ավելի շատ պատասխանատվություն է կրում անհրաժեշտ կանոնների պահպանման տեսանկյունից: Սահմանափակումներն անզգույշ ու անմիջապես վերացնելը կնշանակի այդ սահմանափակումները նորից վերականգնելու միջավայր ստեղծել: Հետեւաբար, մենք բոլորս պետք է միասին աշխատենք վարակի կառավարման առումով ունեցած մեր ձեռքբերումները պահպանելու, գարնան վերջին եւ ամռան սկզբին է՛լ ավելի համարձակ տնտեսական միջավայր ստեղծելու ու զբոսաշրջությունն ավելի արդյունավետ դարձնելու համար: Ներկայիս դրական տեմպը մեզ հնարավորություն է տալիս սահմանափակումների մեղմացման որոշում կայացնել,- հայտարարեց վարչապետը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԾԱԳԱՆՔՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Փետրվարի 4-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության նիստը:

Գործադիրը հաստատեց Տնտեսական արծագանքման ծրագիրը եւ գործողությունների պլանը, որի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի վարչապետի կողմից 2020թ. նոյեմբերի 18-ին հրապարակված ճանապարհային քարտեզի 9-րդ՝ «Կորոնավիրուսի համավարակի հաղթահարում եւ դրա հետեւանքների վերացում» եւ 10-րդ՝ «Տնտեսական ակտիվության միջավայրի վերականգնում» կետերի ապահովման պահանջից:

Ծրագրով սահմանվում են մինչեւ 2021 թվականի առաջին կիսամյակի ավարտը կառավարության հակաճգնաժամային արծագանքման առաջնահերթությունները, նպատակները եւ գործողությունների շրջանակը: Ծրագիրը շեշտադրում է 3 հիմնական գերակայություն՝ տնտեսական ակտիվության վերականգնում, վստահելի գործարար ու սպառողական միջավայրի ապահովում եւ միջնաժամկետ տնտեսական քաղաքականության օրակարգի ձեւավորում: Ծրագրով նախատեսված են 12 նպատակային գործողություն եւ 14 աջակցության ծրագիր:

Ծրագրի ընդհանուր նպատակը լինելու է բյուջեով պլանավորված ՀՆԱ-ի կանխատեսումից 1 տոկոսային կետով հավելյալ աճի առկայություն:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՕՐՇՆԵՐԳԻ ՆԵՐՔՈ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՎ ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՉԵՆ

Փետրվարի 2-ին մեկնարկեց Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի գարնանային նստաշրջանը:

Խորհրդարանի գարնանային նստաշրջանը մեկնարկեց պետական օրհներգով: Նստաշրջանի բացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, երկրի կառավարության անդամները, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, գործող հասարակական կազմակեր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՎ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵԼՈՒՄՈՒՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՉԿԱՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, որոշակի պայմաններով Վրաստան մուտք գործելու իրավունք էր վերապահվել Եվրամիության որոշ երկրների, Իսրայելի, Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Սաուդյան Արաբիայի, Բահրեյնի քաղաքացիներին ու ռեզիդենտներին: Նրանց համար պարտադիր է PCR թեստի բացասական պատասխանը՝ արված մուտքից առաջ ոչ շուտ, քան 72 ժամ առաջ, իսկ Վրաստան այցի 3-րդ օրը պարտավոր են կրկնակի թեստ անցնել: Ներկայումս այդ երկրների ցանկին ավելացվեց նաեւ Թուրքիան:

Ընդ որում, Վրաստանը ներս կթողնի բոլոր այն օտարերկրյա քաղաքացիներին, որոնք անցած կլինեն COVID-19-ի պատվաստման ամբողջական կուրսը՝ երկու չափաբաժին:

Ցավոք, այդ երկրների ցանկում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ...

ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍՏԱՆ», ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱԿ

1920 թվական, հայատառ, հայահունչ թերթի ծնունդ, եւ մի ողջ տեսանելի պատմություն, ուր փայլատակել, լուսարձակել ու փոխվել է նրա «շնչառությունը», միաժամանակ, «Վրաստան» անունը վերածնվել, իմաստավորվել եւ դարձել է հայոց մտքի առողջարար զարկերակը...

100 տարի, ուղիղ մեկ դար: Տասնյակ նվիրյալ խմբագիրներ, լրագրողներ, թղթակիցներ, հայոց մտքի ջահակիրներ հերոսական քայլ են կատարել ու շարունակել իրենց հայապահպան գործունեությունը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՔԱՂՑՐ ՀՈՒՇԵՐ ԱՐԹՆԱՑՐԻՐ, «ՎՐԱՍՏԱՆ»

«Վրաստան», իսկ իմ դպրոցական տարիներին՝ «Սովետական Վրաստանը», որն իմ մեջ մանկուց է տպավորվել, երբ բնակվում էինք մեր հին տանը. «Մետրոշինարարների» թաղամասում, ուր մանկությունս անցավ, ուր հիշողության ծալքերից աչքիս առաջ կինոժապավենի պես անցնում են այն օրերը, երբ պապիկս, հատկապես ձմռանը, շաբաթ-կիրակի օրերին, վաղ առավոտյան արթնանում, վառարանը վառում, թեյնիկը դնում, տունն էր տաքացնում, իսկ ինքը՝

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ ԴԻՄՈՒՄԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԻՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ընդդիմության կողմից պատգամավորական մանդատների չեղարկման պահանջի վերաբերյալ հատուկ ուղերձով դիմել է կառավարող թիմին, ընդդիմությանն ու ողջ հասարակությանը:

Իր ուղերձում նախագահը նշել է, որ վերջին ժամանակահատվածում Վրաստանն անցավ խորհրդարանական համակարգի, իսկ վերջին ընտրություններում հասարակությունն ընտրեց բազմակուսակցական խորհրդարան:

«Այսօր երկրին անհրաժեշտ է այդ համակարգի լիարժեք կիրարկում: Ժամանակը չի սպասում: Համավարակով պայմանավորված ճգնաժամը պահանջում է արագ եւ արդյունավետ գործուն խորհրդարան: Քաղաքական դիմակայությունը չի պատասխա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՍԱԼՈՄԵ ՋՈՒՐԱԲԻՇՎԻԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԻՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նում այդ ծանր մարտահրավերին երկրի ներսում, ինչպես նաեւ միջազգային մակարդակով միասնության եւ համերաշխության ժամանակն է:

Ուստի, այսօր երկու կողմերին ցանկանում եմ կոչել՝ ընդունել խելամիտ որոշումներ, որոնք լինելու են ոչ թե նեղ շահերից, այլ ապահովելու են երկրի առաջընթացը:

Ընդդիմությանը՝ որպեսզի հարգի ընտրողների ձայնն ու մանդատների միջոցով կատարեն ընտրողներին տրված խոստումները:

Մեծամասնությանը՝ որպեսզի թույլ չտա միակուսակցական կառավարման համակարգի հաստատում, չընդունի մանդատների չեղարկման շտապ որոշում եւ ընդդիմությանը ճիշտ որոշում կայացնելու ժամանակ տա:

Դա մեր հասարակության պահանջն է ու ակնկալիքը, որին բոլորս պետք է հարգանքով եւ զգուշությամբ վերաբերվենք»,- ասված է Սալոմե Զուրաբիշվիլու ուղերձում:

ՉԵՂԱՐԿՎԵՑԻՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ

Վրաստանի խորհրդարանը չաջակցեց ընդդիմության ներկայացուցիչների մանդատների դադարեցմանը:

Փետրվարի 2-ի լիագումար նիստում խորհրդարանը մեկ առ մեկ ուսումնասիրեց պատգամավորական մանդատը դադարեցնելու վերաբերյալ խորհրդարանական ընդդիմության 51 պատգամավորների դիմումները: Նիստին ներկա էր 90 պատգամավոր: Հարցը կողմնակիցներ չուներ, դեմ էր հինգ պատգամավոր:

Ընթացակարգային հարցերի հանձնաժողովը, նախորդ շաբաթ քննարկել է ընդդիմության 51 անդամների հարցը եւ նպատակահարմար համարել դադարեցնել նրանց պատգամավորական մանդատները: Հանձնաժողովի եզրակացությունը ներկայացվում է բյուրոյին: Կանոնակարգի համաձայն, պատգամավորական մանդատի դադարեցումը պահանջում է լիագումար նիստում 50 պատգամավորի աջակցություն:

Հիշեցնենք, որ ընդդիմության 54 անդամ իրենց պատգամավորական մանդատները դադարեցնելու պահանջով խորհրդարանին դիմել են դեկտեմբերին: Պատճառաբանելով խորհրդարանական ընտրությունների կեղծումը՝ նրանք բոյկոտել են 10-րդ գումարման խորհրդարանի ձեւավորումը: Այստեղից դադարեցվել էին «Հայրենասերների դաշինքի» երեք անդամների՝ Իրմա Ինաշվիլու, Գիորգի Լոմիայի եւ Գոչա Թեւդորաձեի պատգամավորական լիազորությունները: Նրանց փոխարեն խորհրդարան են մտել կուսակցության ցուցակի հաջորդ անդամները՝ Փրիդոն Ինջիան, Դավիթ Ջիլֆիմիանին եւ Գելա Միքաձեն:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻԶԵ. «ԸՆԴԴԻՄԱԴԻՐ 20 ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄՏՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»

Խորհրդարանական մեծամասնության ղեկավար Իրակլի Կոբախիձեի խոսքով, մոտ 20 ընդդիմադիր պատգամավորներ, որոնք ցանկանում են մտնել խորհրդարան, սակայն շանտաժի եւ բուլինգի պատճառով նրանք ի վիճակի չեն այդ քայլին դիմել:

- Վերջապես, մենք տեղեկություններ ունենք, որ լրացուցիչ 20 ընդդիմադիր պատգամավոր ցանկանում է մուտք գործել խորհրդարան, սակայն, շանտաժի եւ բուլինգի պատճառով նրանք դեռ չեն կարող գնալ այս քայլին: Ուստի, նպատակահարմար ենք գտնում այս պատգամավորներին եւս մեկ հնարավորություն տալ՝ պահպանել իրենց պատգամավորական մանդատները:

Կցանկանայինք շեշտել, որ այսօրվա որոշումը չի նշանակում արմատական ընդդիմության նկատմամբ մեր ու մեր կողմնակիցների վերաբերմունքի փոփոխություն: Մեր դիրքորոշումը մնում է անփոփոխ, որ ընդդիմության արմատական հատվածի մասնակցությունը խորհրդարանական եւ քաղաքական գործընթացներին որակապես բացասական եւ հակաարդյունավետ դեր է խաղում մեր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Սակայն, ելնելով վերոնշյալ նկատառումներից, մենք այսօր զերծ կմնանք նրանց պատգամավորական մանդատները դադարեցնելուց:

Մենք մեկ անգամ եւս նշում ենք, որ «Վրացական երազանքը» մանեւրելու շատ մեծ ռեսուրս ունի, մինչդեռ արմատական ընդդիմությունն ունի ընդամենը երկու տարբերակ՝ մտնել կամ չմտնել խորհրդարան,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

Դեռ նախօրեին հայտնի դարձավ, որ խորհրդարանական մեծամասնությունը զերծ կմնա ընդդիմության մանդատները դադարեցնելուց: Այս մասին հայտարարեց «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն:

- Մենք ընդդիմության պատգամավորներին տալիս ենք եւս մեկ հնարավորություն, հարգել իրենց աջակիցների կամքը, որոնց երկու երրորդը, ըստ վերջին հարցումների, կողմ է, որ իրենց նախընտրած կուսակցությունները մտնեն խորհրդարան: Բացի այդ, մենք հաշվի ենք առել հարցի նկատմամբ մեր միջազգային գործընկերների վերաբերմունքը, ովքեր հակված են արմատական ընդդիմությանը կառուցողական ռելսերին անցկացնելու եւս մեկ հնարավորությանը,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

ՍՈՍՈ ՑԻՆՑԱՁԵ. «ԵՐԱԶԱՆՔԻ» ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՄԵՆԱԿ ՄՆԱԼԸ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է»

Քաղաքագետ Սոսո Ցինցաձեն, մեկնաբանելով ընդդիմության կողմից խորհրդարանի բոյկոտի, ընդդիմադիր 51 պատգամավորի մանդատների հնարավոր չեղարկման հարցը, հայտարարեց, որ վրացական քաղաքականության մեջ խստությունը, տրված խոստման կատարումն այնքան էլ ընդունված չէ: Ընդդիմության միասնությունը միշտ հիմնված է եղել Մամադավիթ Լեռան կամ Իլիայի հուշակոթողին տրված երդման վրա, թեպետ այդ միասնությունը շարունակվել է երկու-երեք շաբաթ:

- Բնականաբար, սպասելի է, որ խորհրդարան մուտք գործող ընդդիմադիրների թիվը կավելանա՝ հայտնի փաստ է, որ վատ օրինակը վարակիչ է: Ավելին միլիոնատերերը այդ որոշումը, ի տարբերություն մյուսների, շատ ավելի հեշտությամբ կընդունեն, քանի որ նրանց հետեւում բիզնեսն է, հետեւաբար, գոյություն ունեն նրանց վրա ազդեցության լծակներ:

Ակնհայտ է, որ «Երազանքը» չի հանգստանա մինչեւ ամենագլխավոր ընդդիմությունից՝ «Ազգային շարժումից» որեւէ մեկին խորհրդարան չբերի եւ դրանով իսկ չհարվածի «Ազգայնականներին»: Գուցե 20-ին չկարողանան, սակայն 10-16 պատգամավորի խորհրդարան կբերեն: Չգիտեմ, թե «Ազգայնականները» ինչպես կընդունեն այդ հարվածը, չգիտեմ նաեւ, թե ինչ քայլեր կձեռնարկի «Ազգայնականների» ղեկավարությունը:

«Երազանքը» քաջատեղյակ է կամ Արեւմուտքը լավ «հասկացրեց», որ խորհրդարանում մենակ մնալը կամ միակուսակցական խորհրդարանի ձեւակերպումը քաղաքական ինքնասպանություն է եւ հնարավորինս կանի ընդդիմությանը խորհրդարան բերելու գործընթացի շարունակման համար, բայց դա չի իրականացվի բանակցություններով, պայմանավորվածություններով, միջնորդ դեսպանների մասնակցությամբ: Այդ ամենը, ինչպես ասում են, կանցկացվի կուլիսների հետեւում, գաղտնի պայմանավորվածությունների ճանապարհով»,- հայտարարեց քաղաքագետը:



ԱՄՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՌՍԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրեց Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմավարական սպառազինության կրճատման (ՌՍԿ) պայմանագրի երկարաձգման մասին համաձայնագիրը:

Նշենք, որ փաստաթուղթը երկու երկրների միջեւ ձեւակերպվել էր 2010 թվականին: Նոր համաձայնագիրը ստորագրվեց փետրվարի 5-ին եւ ուժի մեջ կմնա մինչեւ 2026 թվականի փետրվարը:

Նոր համաձայնագրի ստորագրման նախաձեռնողը ԱՄՆ նոր նախագահ Ջո Բայդենն էր:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՑՈՒՅՑԵՐ՝ ՆԱՎԱԼՆՈՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ

Մոսկվայում եւ Ռուսաստանի մյուս քաղաքներում շարունակվում են ցույցերը՝ ընդդիմության ներկայացուցիչ Ալեքսեյ Նավալնու ազատ արձակման պահանջով:

Հիշեցնենք, որ Գերմանիայում թունավորումից հետո բուժվող Ալեքսեյ Նավալնին Մոսկվա վերադառնալուն պես ձերբակալվեց եւ հասարակական կարգի խախտման մեղադրանքով դատապարտվեց 2,5 տարվա ազատազրկման:

Նշենք, որ Նավալնու թունավորման փաստով Եվրամիությունը Ռուսաստանի դեմ ընդունեց մի շարք պատժամիջոցներ:

ՈՒԿՐԱԻՆԱ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելինսկին ստորագրեց կարգադրություն ժողովրդական պատգամավոր Տարաս Կոզակի, նաեւ նրա մեդիահոլդինգում ներառված հեռուստաալիքների դեմ պատժամիջոցներ սահմանելու վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, պատժամիջոցներ են սահմանվում «112 Ուկրաինա», «NewsOne» եւ «ZIK» հեռուստաալիքների դեմ: Դրանք նախատեսում են հեռուստաալիքների ակտիվների շրջափակում, Ուկրաինայի սահմաններից կապիտալի դուրսբերման արգելակում, տնտեսական եւ ֆինանսական գործունեության դադարեցում:

ՉԻՆԱՍՏԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԹԱՅՎԱՆԻՆ

Պաշտոնական Չինաստանը Թայվանին զգուշացրեց, որ անկախության ձեռքբերման նրա քայլերը կհանգեցնեն պատերազմի: Զգուշացումն արվեց, երբ Չինաստանը ռազմական ակտիվություն սկսեց այդ տարածաշրջանում:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՎ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵԼՈՒՄՈՒՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՉԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանը ներառված չէ: COVID-19-ի թեստի բացասական պատասխանի առկայության դեպքում, Վրաստան ազատ մուտք գործելու վերաբերյալ տարածված տեղեկատվությանն ի պատասխան Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը տարածել է պարզաբանում, ըստ որի, Վրաստանի կառավարության սահմանած նոր կարգավորումներով Հայաստանը չի մտնում այն երկրների ցանկում, որի քաղաքացիները կարող են COVID-19-ի թեստի բացասական պատասխանի առկայության դեպքում մուտք գործել Վրաստան:

Հայաստանի քաղաքացիների Վրաստան մուտքը հնարավոր է բացառապես օդային ճանապարհով՝ COVID-19-ի պատվաստման ամբողջական կուրսն (երկու չափաբաժին) անցնելուց հետո:

Նաեւ նշել ենք, որ փետրվարի 1-ից Վրաստանը վերսկսել է կանոնավոր չվերթերը: Սրա հետ կապված, ավիաընկերությունները հրապարակել են այն ուղղությունները, որոնցից կարող են օգտվել Վրաստանում գտնվող անձինք:

«Georgian Airways» ավիաընկերությունն, օրինակ, այս ցանկում ներառել է նաեւ Երեւանը:

Վրաստանի կառավարության տարածած տեղեկատվության համաձայն, Վրաստան-Հայաստանի ինչպես օդային, այնպես էլ՝ ցամաքային սահմաններով ելումուտի հետ կապված նոր կանոնակարգեր չկան, քանի որ Վրաստանը սահմանը չի բացել Հայաստանի համար:

Ինչ վերաբերում է հատուկ պայմաններին, Վրաստանից Հայաստան վերոնշյալ չվերթերով կարող են տեղափոխվել Հայաստանի քաղաքացիները (հետեւաբար նաեւ՝ Հայաստանից Վրաստան՝ Վրաստանի քաղաքացիները): Թույլ է տրվում նաեւ տեղափոխվել (Վրաստանից դուրս գալ ու վերադառնալ) Վրաստանի ու Հայաստանի պաշտոնական երկքաղաքացիություն ունեցող անձանց (ում քաղաքացիությունը պաշտոնապես պահպանված է ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ Հայաստանում):

Ո՛չ օդային, ո՛չ էլ ցամաքային ճանապարհով թույլատրելի չէ հատել Վրաստանի սահմանը Վրաստանի քաղաքացիներին ու նրանց, ովքեր բնակության իրավունք ունեն:

Բոլոր պայմանները բավարարելու դեպքում, Վրաստանն իր սահմանը հատող եւ Հայաստան տեղափոխվող քաղաքացուց չի պահանջում որեւէ փաստաթուղթ: Հավելյալ պահանջներ կարող է ունենալ ավիաընկերությունը, այս հարցը պետք է պարզել անմիջապես ավիաընկերությունից: Ինչ վերաբերում է Հայաստանին, երկիր մուտք գործելուց ոչ ավելի ուշ, քան 72 ժամվա ընթացքում արված կորոնավիրուսի բացասական թեստ ներկայացնելը պարտադիր է:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂՑԿԵՂԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՍԱՆԵԼԻ ԼԻՆԻ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի նախագահի նախաձեռնությամբ, Եվրահանձնաժողովի կողմից սկսած ԵՄ քաղցկեղի հաղթահարման ծրագիրը պետք է հասանելի դառնա Վրաստանին եւ ԵՄ հետ կապված այլ գործընկերներին:

Վրաստանի նախագահն այս նախաձեռնությամբ հանդես եկավ Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային գրասենյակի առցանց ֆորումի ընթացքում:

- Մենք պետք է մաս կազմենք այս ծրագրի: Վրաստանը պատրաստ է միանալ այս նախաձեռնությանը եւ ուժերը միավորել եվրոպական տարածաշրջանի հետ,- ասաց Վրաստանի նախագահը:

Վրաստանի նախագահը կոչ արեց բոլոր պետությունների ղեկավարներին միասին լինել եւ համատեղ գործողություններ իրականացնել քաղցկեղի դեմ համատեղ գործողություններ ձեռնարկելու համար:

Սալոմե Զուրաբիշվիլին Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական գրասենյակի քաղցկեղի դեմ պայքարի դեսպան Ահարոն Անդերսոնին հրավիրեց Վրաստան իր փորձը կիսելու համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 5-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետական նախարար Թեա Ախվլեդիանին հանդիպում ունեցավ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Պետնախարարը համապարփակ տեղեկատվություն տրամադրեց շուրջ 60 միջազգային գործընկերների՝ 2020 թվականին պետնախարարի աշխատակազմի գործունեության վերաբերյալ, ինչպես հաշտեցման եւ ներգրավման քաղաքականության իրականացման ընթացքում ձեռքբերված արդյունքների, այնպես էլ՝ քաղաքացիական հավասարության եւ ինտեգրման քաղաքականության տեսանկյունից իրականացրած գործընթացում: Հեռավոր հանդիպման ժամանակ հատուկ ուշադրություն հատկացվեց բռնազավթված տարածքներում ստեղծված ծանր իրավիճակին: Շեշտը դրվեց այսպես կոչված բորդերիզացիայի գործընթացի, Ցխինվալիի ու Աբխազիայի տարածաշրջաններում փաստացի բռնակցման, անօրինական ձերբակալությունների, մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների եւ համավարակի ֆոնին սրված հումանիտար ճգնաժամի վրա:

Միջազգային գործընկերների հետ քննարկվեց նաեւ պետական նախարարի աշխատակազմի իրավասության շրջանակներում գտնվող երկու ոլորտներում ընթացիկ տարվա ծրագրերը, խնդիրները եւ հետագա համագործակցության հետ կապված հատուկ տեսլականները: Հանդիպմանն ընդգծվեց միջազգային գործընկերների կողմից Վրաստանի խաղաղարար քաղաքականությանը անսասան աջակցությունը եւ ակտիվ ներգրավվածության կարեւորությունը:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ ԱՎՏՈՎԹԱՐՆԵՐԻՑ ՏՈՒԺԵԼ Է 6 640 ԵՎ ԶՈՀՎԵԼ՝ 450 ՄԱՐԴ

Վրաստանի վիճակագրության ծառայությունը, հենվելով երկրի ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված տվյալների վրա, հրապարակել է 2020 թվականին ավտոճանապարհային վթարների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Ըստ ծառայության տվյալների, 2020 թվականին Վրաստանում ընդհանուր առմամբ տեղի է ունեցել 4 999 ճանապարհատրանսպորտային պատահար: Դրանցից 137-ի պատճառ է դարձել ոգելից խմիչքը: Ընդհանուր առմամբ, անցած տարի ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում տուժել է 6 640, զոհվել՝ 450 մարդ:

2020 թվականին ընտանեկան բռնության զոհերի թիվը կազմել է 9 144: Ինչ վերաբերում է բռնարարներին, ապա նրանց թիվը կազմում է 8 716:

Անցյալ տարի թրեֆիքինգի հոդվածով կատարվել է 11 հանցագործություն, որտեղից ՆԳ նախարարությունը բացահայտել է միայն մեկը:

2020 թվականին երկրի ողջ տարածքում գրանցվել է 13 511 հրդեհ: Հրդեհի արդյունքում զոհվել է 65 մարդ, վիրավորվել՝ 203-ը: Ոչնչացվել է 487 շենք եւ 53 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ ՉԻ ԱՆՑԵԼ

Վրաստանի էկոնոմիկայի նախարարության տեղեկատվությամբ, 2020 թվականին տեխզննում է անցել 710 378 ավտոտրանսպորտային միջոց, որից 31 տոկոսը տեխնիկական խնդիր է ունեցել:

Նախարարության տվյալներով, անցյալ տարի տեխզննում է անցել 710 378 տրանսպորտային միջոց, որից 488 824-ը, կամ ընդհանուրի 69%-ը եղել է պիտանի, 219 895-ը չի բավարարել պահանջները, իսկ 1 659 տրանսպորտային միջոցի արգելվել է տեղաշարժվել:

Միեւնույն ժամանակ, ըստ գործակալության, անցած տարի 13 863 միկրոավտոբուս անցել է մշտական տեխզննում, որից 42-ին արգելվել է երթեւեկությունը, պիտանի է եղել 9 657-ը, իսկ 4 164 միկրոավտոբուս չի բավարարել պահանջները:

ՈԼՈՐՏ

ԱԳՐՈՔԱՐՏԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ն է

Վրաստանի շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվությամբ, ագրոքարտերը ստանալու ժամկետը լրանում է փետրվարի 20-ին: Ֆերմերները քարտերի վրա ունեցած բալերը կարող են օգտագործել մինչեւ ընթացիկ տարվա մայիսը:

«Ծրագրի շահառուների համար ագրոբալերի հաշվեգրումը կավարտվի փետրվարի 20-ին: Շահառուները, որոնք դեռ ագրո քարտ չեն ստացել, ինչպես նաեւ նրանք, ովքեր առաջին անգամ են գրանցել կամ ճշտել հողատարածքը մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը, քարտերը կկարողանան ստանալ մինչեւ այս տարվա փետրվարի 20-ը»,- ասված է նախարարության հայտարարության մեջ:

Գյուղատնտեսական նշանակության հողատերերի խրախուսման պետական ծրագրի շրջանակներում, ագրոքարտերի վրա հաշվարկված միավորների օգտագործման վերջնաժամկետը 2021 թվականի մայիսի 20-ն է:

Ագրոքարտը ստանալու համար, նախքան Liberty Bank-ի մասնաճյուղ այցելելը, կուտակված միավորների վերաբերյալ տեղեկություն ստանալու համար կարող եք այցելել հետեւյալ հասցեով **www.myliberty.ge:**



ՈՐՔԱՆ Է ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ամենահարուստ մարդու՝ Բիձինա Իվանիշվիլու կարողությունը գնահատվում է 5,67 մլրդ դոլար: Այդ մասին հաղորդում է Bloomberg-ը:

Bloomberg Billionaires Index վարկանշային աղյուսակում աշխարհի հարուստների ցանկում Իվանիշվիլին զբաղեցնում է 458-րդ տեղը: Նշվում է, որ անցյալ տարի Իվանիշվիլու կարողությունը չի փոխվել, մինչդեռ հունվարին այն նվազել է 25 մլն դոլարով:

Գործակալության տվյալներով, գործարարի միջոցները ներդրվել են տարբեր ոլորտներում աշխատող ընկերություններում:

Նշենք, որ նախքան քաղաքականությունից հեռանալը, «Վրացական երազանք» կառավարող կուսակցության հիմնադիրն իր կարողության մեծ մասը փոխանցել է իր բարեգործական հիմնադրամի հաշվին:

ԿԱԽԱԲԵՐ ՔԵՄՈԿԼԻՋԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, կառավարության աշխատակազմը ղեկավար է նշանակվել Կախաբեր Քեմոկլիձեն: Նրա խոսքով, Քեմոկլիձեն արժանի պետական ծառայող է եւ երկրին ծառայելու մեծ փորձ ու բավարար գիտելիքներ ունի, որպեսզի կարողանա արդյունավետ աշխատել կառավարության վարչությունում:

- Նա տարիներ շարունակ եղել է մեր թիմում: Վերջերս Կախան զբաղեցնում էր Ազգային անվտանգության գրասենյակի ղեկավարի պաշտոնը: Նա մասնակցել է երկրի համար կարեւոր իրադարձություններին, ինչպիսիք են Ժնեւի բանակցությունները: Ունի բավարար գիտելիքներ կառավարության վարչության արդյունավետ աշխատանքի համար,- ասաց Գիորգի Գախարիան:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում բացվեց Հնդկաստանի դեսպանություն: Երկու երկրների միջեւ ազատ առեւտրի հարցով արդեն իսկ ինտենսիվ բանակցություններ են տարվում: Հարցը քննարկվեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի եւ Հնդկաստանի դեսպան Կաան Օրգի Դյուալմայի հանդիպմանը:

Կողմերը առանձնակի ուշադրություն հատկացրին երկու երկրների միջեւ առեւտրական եւ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանը, ինչը նկատելիորեն կնպաստի ազատ առեւտրի պայմանագրի ձեւակերպմանը:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳԻ ՆԵՐՔՈ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Այն սկսվեց ընդդիմությունը ներկայացնող պատգամավորների մեծամասնության բոյկոտի, միացյալ ընդդիմությունից տարանջատված «Հայրենասերների ալյանսի» մի հատվածի եւ «Քաղաքացիներ» կուսակցությունից ընտրված պատգամավորների խորհրդարան մուտք գործելու եւ ընդդիմադիր 51 պատգամավորների մանդատների չեղարկման պահանջի ֆոնի վրա:

Խորհրդարանական ընթացակարգի համաձայն, նստաշրջանի բացմանը նախորդ տարվա հաշվետվությամբ հանդես եկավ խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեն:

ՉՆԱՅԱԾ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԼԻԱՐԺԵՔ ԳՈՐԾԵԼ Է

Իր ելույթում խորհրդարանի նախագահը հայտարարեց, որ չնայած համավարակի, օրենսդիր մարմինը լիարժեք աշխատեց եւ այդ ժամանակահատվածում անցկացրեց 51 լիագումար նիստ ու ընդունեց 615 օրենսդրական փոփոխություն:

- Բարելավվեց օրենքի գերակայության իրավիճակը, կորոնավիրուսի դեմ պայքարի, ընտրակարգի եւ կարգավորումների, թվային կառավարման, տեղեկատվական անվտանգության եւ այլ ուղղություններով: Խորհրդարանը երեք անգամ լսեց երկրի վարչապետին, նախարարները պարբերաբար հյուրընկալվում էին կոմիտեական եւ լիագումար ձեւաչափով լսումներին, առաջադրվեցին ավելի քան 600 պատգամավորական հարցումներ,- հայտարարեց Արչիլ Թալակվածեն:

Նրա խոսքով, խորհրդարանն ապահովեց ընտրական օրենսգրքի բարեփոխումը, ինչը դարձավ սահմանադրական բարեփոխման տրամաբանական շարունակությունը «2020 թվականին ներդրվեց էական համամասնական, իսկ 2024 թվականին՝ կներդրվի լրիվ համամասնական ընտրահամակարգ, կուսակցությունների ֆինանսավորման նոր մոդելը, ընտրական քարոզարշավի բարելավված կարգը: Դրանք այն փոփոխություններն են, որոնք խորհրդարանը մշակեց անցյալ տարի, որի արդյունքում Վրաստանի խորհրդարանի ընտրաշեմն հաղթահարեցին ինը քաղաքական կուսակցություններ եւ նորագույն պատմության մեջ առաջին անգամ Վրաստանի խորհրդարանում պատգամավորական մանդատ կարողացավ նվաճել ընդդիմության 60 ներկայացուցիչ,- նշեց խորհրդարանի նախագահը:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդարանի նախագահի հավաստմամբ, անցյալ տարվա կարեւորագույն իրադարձությունը խորհրդարանական ընտրություններն էին, որոնք միջազգային դիտորդական կազմակերպությունների գնահատմամբ մրցակցային էին եւ անցկացվեցին հիմնարար իրավունքների պաշտպանությամբ: Արչիլ Թալակվածեի խոսքով, ընտրությունների արդյունքները ակնհայտ ցույց տվեցին ընտրական օրենսգրքի փոփոխությունների արդարացիությունը:

- Ցավոք, ընդդիմության մեծ մասը հաշվի չառավ ո՛չ համավարակի պայմաններում ընտրություններին մասնակցած 2 միլիոն քաղաքացու ընտրությունը, ո՛չ իր կողմնակիցների ցանկությունը, որ խորհրդարանին անհրաժեշտ է ուժեղ ընդդիմություն եւ ոչ էլ քաղաքական երկխոսությանը տրված խոստումը՝ նրանք հրաժարվեցին ընդհանրապես խորհրդարան մտնելուց, հետեւաբար հրաժարվեցին ժողովրդավարությունից, քանի որ առանց մասնակցության ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել,- հայտարարեց Արչիլ Թալակվածեն եւ հավելեց, որ ողջունում է «Եվրոպական սոցիալիստների» եւ «Քաղաքացիների» խորհրդարանի աշխատանքին մասնակցելու մասին որոշումը:

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԿԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԻ

Իր հաշվետու զեկույցում խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեն անդրադարձավ նաեւ ընտրական օրենսգրքի առավել կատարելագործման թեմային:

Նրա խոսքով, մշակման փուլում է այնպիսի օրինագիծ, որտեղ նախատեսված են միջազգային կազմակերպությունների հանձնարարականներն ու դիտողությունները:

Արչիլ Թալակվածեն խոսեց նաեւ խորհրդարանի առաջիկա գործունեության մասին, միաժամանակ շնորհակալություն հայտնեց Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանի պատգամավորներին իրականացված աշխատանքի համար:

ԵՐԲ ՀԱՄԱՏԵՂՎՈՒՄ ԵՆ ԲԻԶՆԵՍՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ԷԴՈՒԱՐԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ. «ԹՈՂ ԵԿԱՄՈՒՏԸ ՔԻՉ ՊԱԿԱՍ ԼԻՆԻ, ԲԱՅՑ ԱՄԵՆԱԱՐԺԵՔԱՎՈՐԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆԸ, ՄՆԱ»

Թբիլիսիի Քեթեւան Ծամեբուլի 12 հասցեում, մեր հայկական թատրոնից 50մ հեռավորությամբ, կա «համով» մի անկյուն՝ «Արմենիա» անունով: 2011 թվականից խանութն ամեն օր առավոտյան 10:00-ից սպասարկում է թբիլիսցիներին, ովքեր սիրում, նախընտրում են նաեւ Հայաստանում արտադրվող մթերքի տեսականին. սուջուխ, բաստուրմա, պահածո, կոնյակ, կաթնամթերք, քաղցրավենիք, ծավարեղեն... մի խոսքով, հայկական շուկայի համ ու հոտ, որն արդեն տասը տարի ինտեգրվելով վրացական շուկա, այս տարի եւս գործունեության ծավալների ընդլայնում է նախատեսում: Հաջողության գրավականը, անշուշտ, տնտեսական ճիշտ ռազմավարությունն է, թեեւ կարեւոր մեկ գործոն էլ կա, որ շատերը եւ առաջին հերթին բիզնես փորձագետները, կապում են «Արմենիայի» տասնամյա տնօրենի, «Վիվա» ընկերության հնգամյա համահիմնադրի ու Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի քսանից ավելի տարիների դերասան, երեսունութամյա Էդուարդ Մուրադյանի գործարարական տաղանդի հետ:

Մեր հարցազրույցը դերասան-գործարարի հետ տարվա նորամուծության՝ «Արմենիա» խանութում սեփական բրենդի (ապրանքանիշ) ստեղծման օրերին է ու նաեւ հարազատ թատրոնի նոր շենքի բացման նախաշեմին..

- Էդուարդ, շնորհավոր տասնամյա հոբելյանական տարի:

- Շնորհակալ եմ: Հաճելի է, որ տարին սկսում ենք փոխադարձ շնորհավորանքով, քանի որ ես էլ «Վրաստան» թերթի հարյուրամյա հոբելյանը շնորհավորելու առիթն ունեմ: «Վրաստանը» յուրաքանչյուր վիրահայի անցած, ներկա ու գալիք տարիների վավերագիրն է: Սա շատ կարեւոր է ոչ միայն հայ-վրացական ջերմ ու բազմաբնագավառ հարաբերությունների ամրապնդման, այլեւ Վրաստանում հայկական հետքն արձանագրելու տեսանկյունից: Մեր հարցազրույցն էլ ահա, այդ է փաստելու հետագայում՝ հայկական «Արմենիա» խանութի գոյությամբ նաեւ...

- ...Ու նաեւ հայկական նոր ապրանքանիշի մուտքը վրացական շուկա:

- Բիզնեսում անուն ու վստահություն ունենալու պայմաններից մեկը սեփական բրենդի առկայությունն է: Թող անակնկալ լինի, թե «Արմենիայի» բրենդը ինչ նոր մթերք է ենթադրում, ասեմ միայն, որ արտադրվելու է այն Հայաստանում՝ տարածվելով այստեղ եւս ու, կարծում եմ, գրավելով տեղի սպառողի համային ճաշակը:

- Ի՞նչ եք ներմուծում, տարածում եւ կամ վաճառում:

- Ներմուծումն իրականում հեշտ գործընթաց չէ: Վրաստանի շուկան ունի իր կանոնները, իր պահանջները: Շատ կարեւոր է ուսումնասիրել, յուրացնել այն ու ինտեգրվել: Մենք համագործակցում ենք վրացական գործարար շրջանակների հետ: «Վիվան» Վրաստանի առաքիչների բիզնես ասոցիացիայի միակ հայկական ընկերությունն է: Այս ասոցիացիայում ընդգրկված են վրաստանյան 80-ից ավելի խոշոր ընկերություններ, այդ թվում՝ «Կոկա-կոլան», «Սարաջիշվիլին», «Բարամբոն» եւ այլն: Անձամբ մասնակցում եմ տարբեր սեմինարների, կոնֆերանսների, փորձում մշտական կապ պահել բոլորի հետ, մոտեցնել ու ծանոթացնել ոչ միայն հայկական ապրանքատեսականուն, այլեւ մեր թատրոն բերել ու նաեւ հրավիրել Հայաստան:

Ինչ վերաբերում է վաճառվող տեսականուն, ապա անընդհատ համալրվում ենք նորով: Այս պահին «Արմենիա» խանութի ցանցերում կան «Արարատ», «Պռոշյան», «Կիլիկիա», «Գրանդ-Քենդի» «Բեկոն», «Աթենք», «Բիելա», «Արտֆուդ», «Մարիաննա» ... ու էլի բազմաթիվ ապրանքանիշեր, որոնք վաղուց պահանջված են՝ ունենալով իրենց աճուն սպառողը:

- Աճուն սպառող համավարակի պայմաններո՞ւմ:

- Պատկերացրեք՝ այո: Բնականաբար, համավարակը, դոլարի տատանումներն ու լարիի արժեզրկումն իրենց բացասական հետեւանքներն ունեցան: Բայց մենք կարողացանք հաղթահարել, ու ասեմ ավելին՝ 2020 թվականին 5 տոկոս աճ գրանցել: Բիզնեսը ճկուն օրգանիզմ է, անընդհատ փոփոխվող, ուր արագ կողմնորոշում է հարկավոր: Շատերի նման մենք նույնպես մեր առաքման ծառայությունն ունեցանք, ֆեյսբուքյան (www.facebook.com/armeniafood) եւ ինստագրամյան (www.instagram.com/armeniafood) էջերը: Ոչ մի րոպե չենք դադարել աշխատել, մեր 28 աշխատակիցներից որեւէ մեկն աշխատանքից ու աշխատավարձից չի զրկվել: Ընդհակառակը, ընդունել ենք մեկ նոր աշխատող:

- «Հայի հետին խելքն» օգնե՞ց...

- Հայի հետին խելքով արված վիճակագրությունը՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով: Բիզնեսը շղթա է, ուր յուրաքանչյուր օղակ իր գործառույթն ունի, եթե օղակներից մեկը թուլացավ, խարխլվելու է հաջորդը ու արգելափակելու առաջընթացը: Շատ կարեւոր է նաեւ, որ աշխատակիցներից յուրաքանչյուրն ունենա իր հստակ պարտականությունը, առաջին ձախողումը կարող է բխել նրանից, որ դու՝ որպես ղեկավար, քո աշխատակցից պահանջես՝ լինել դու, որովհետեւ ամեն մարդ ունի իր ֆիզիկական ու մտավոր կարողությունները, որոնք եւ շղթան հյուսող օղակներն են:

- Ի դեպ, ասում են, «Արմենիայի» աշխատակցուհիներից արդեն հինգ հարսնացու են ընտրել....

- Հինգ չէ՝ ութ: Եկել, տեսել, հավանել ու հինգին խանութից են տարել, երեքին՝ գրասենյակից...

- Այս պահին նոր նյութի թեմա ես առաջարկում: Բայց լավ, անցնենք առաջ: Ինչպե՞ս ծեւավորվեց «Արմենիայի» առաջին օղակը:

- «Արմենիա» խանութների ցանցը հիմնել է «Վիվա» ՍԲԸ ընկերությունը, որը ղեկավարում են թբիլիսցի, այժմ՝ երեւանաբնակ եղբայրներ, Հայաստանում «Գենացվալե» ռեստորանային ցանցի սեփականատերեր Հակոբ եւ Ֆերդինանդ Չոբանյանները: Թբիլիսիում հայկական տեսականու խանութ հիմնելու եւ տնօրինելու առաջարկ հենց նրանցից եմ ստացել: Թբիլիսիում գործում է երկու «Արմենիա» խանութ՝ Քեթեւան Ծամեբուլի 12 եւ Վաժա-Փշավելա 17 հասցեներում: Նույն լոգոտիպով խանութներ գործում են նաեւ Ախալքալաքիում, Բաթումիում: Իսկ մեր կողմից ներմուծվող տեսականին տարածվում է ամբողջ Վրաստանով, ցանցային ու առանձին խանութներում:

- Ո՞վ է խանութի հաճախորդն ու սպառողը:

- Հավլաբարի «Արմենիայում» արդեն հարազատ դարձած հայեր, վրացիներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ, եզդիներ ու այլազգիներ: Այլ է Վաժա-Փշավելայում: Գալիս է մեր ավագ սերունդը, այն հին սերնդի մտավորական վրացիները, որոնք ժամանակին սերտ կապ են ունեցել հայի, Հայաստանի հետ: Չեք պատկերացնի, թե ինչ կարոտով են մտնում ոչ միայն նրանք, այլեւ նրանց թոռներն ու ծոռները, ու անկախ գնումներից, մի-մի պատմություն պատմում հայերի հետ ունեցած իրենց բարեկամությունից, երբեմնի բազմազգ հարեւանների հետ շփումներից, ուրախության սեղաններից... Մեր խանութներում մեկ այլ մթնոլորտ է, որ հաճախ մոռացնել է տալիս նույնիսկ ֆինանսական շահույթը:

- Լսել եմ, «Արմենիայում» ցանկությունների արտասովոր տետր ունեք...

- Այո՛: Մեր հաճախորդները ցանկության դեպքում նշում են, թե հայկական ինչ մթերք կցանկանային ձեռքբերել Վրաստանում: Եթե պահանջարկը մեծ է, ապա տվյալ տեսականին վաղ թե ուշ հայտնվում է մեր վաճառափեղկին: Եթե ոչ, ապա կոնկրետ այդ հաճախորդին այն պարզապես նվիրում ենք: Միշտ չէ, որ շահույթն է կարեւոր:

- Այս մտածողությունը չի՞ խանգարում բիզնեսում:

- Այո... Բայց ես փայփայում եմ այն, թող եկամուտը քիչ պակաս լինի, բայց ամենաարժեքավորը՝ մարդկայինը, մնա:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)